

էջ 440: Մխիթար Գօշէն մինչև Վարդան Մակուեցի: Տես Շի սարուածքը:

Գ. Առաքել Դաւրիթեցի ունի երրորդ «կարգ» մ'ալ, զոր գետեղած է իր Պատմութեան ԻԹ. գլուխին մէջ, էջ 391. Գրիգոր Տաթևացիէն մինչև Մելքիսէթ Վփանցի: Տես Շի սարուածքը:

Ի. Վկայագիր Վարդան Բաղիշեցոյ. էջմիածին, Թ. 737, թղ. 5ա—7ա: Տրուած է 1680ին Գրիգոր Բաղիշեցոյ (Շղթայակիրին): Բնագիրը կը հրատարակեմ ստորև, դուրս թողլով ընդարձակ նախաբանը:

Լ. Վկայագիր Մարգարէ Վ. Կարնեցոյ, տրուած 1697ին Մխիթար Սերաստացոյ: Բնագիրը լոյս տեսած է Հանդ. Ամս. 1949 (Մխիթար տօնագիրք), էջ 340—341:

Մ. Վկայագիր Սահակ Վ. Կոստանդնուպոլսեցոյ, տրուած 1785ին Սերովրէ Վ. Կ. Պոլսեցոյ. Վիեննա, Մխիթ. Մատ. Թ. 565 (Յուզակ, էջ 1032):

Ն. Կարգ Վարդապետաց. հաւանօրէն 1662էն. հրատ. Յ. Թօփճեան, Յուզակ հայ. ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, Թ. 62, էջ 69:

Օ. Մեծ Մաշտոց, Կ. Պոլիս 1807, էջ 335—337: Հոս Եղիազար կաթողիկոսէն մինչև Սիմէոն կաթողիկոս յաջորդութիւնը ներկայացուած է իրրև վարդապետական կարգ. ուստի նկատելու է կեղծիք:

Այս բնագիրներէն հնագոյնն է առաջինը, զոր կարծած է Կարապետ Բաղիշեցի իրրև ականջալուր եւ ականատես. «զոր լուաք ի պատմագրացն եւ զոր աջօք մեր տեսաք»: Շ կը հետեւի իրեն ընդհանրապէս. իսկ կը խոտորի անկէ այն նոր յաւելուածներով, որոնք ժէ. դարու կը պատկանին եւ կրնան Կարապետ Վարդապետի Կարգաց շարունակութիւնը նկատուիլ: Նոյնպէս միւս D—K օրինակները ժՁ. դարու վարդապետաց կարգերու մէջ հետեւող են Աի. իսկ ժէ. դարու համար կրնան նոր աղբիւր նկատուիլ յատկապէս երկու կարգերու նոր ճիւղաւորումներու համար. յամենայն դէպս անոնք աչքի առաջ ունեցած են Բ. մասին համար նաեւ Շ:

Վարդապետաց այս երկու կարգերու բարդաւածման ճշգրիտ պատկերը տալ անհնարին է. որովհետեւ իւրաքանչիւր վարդապետ, որ կ'ընդունէր իր վարդապետէն վարդապետական ծայրագոյն իշխանութիւն, կ'ընդունէր նաեւ իրաւունք իր կարգին ունենալու

աշակերտներ եւ բաշխելու անոնց վարդապետական գաւազան: Այսու կ'ընծիւղէին նոր նոր ճիւղեր: Կ'ըսուի, թէ Եսայի Նչեցի 600 արեղայի վարդապետական իշխանութիւն տուած ըլլայ: Չափազանցութիւն է թերեւս այս: Բայց ստոյգ է որ յընթաց 200—300 տարիներու Արեւելեան եւ Արեւմտեան Դպրոցները բարդաւածեցան նորանոր ճիւղերով, ծաղկեցուցին մեծաթիւ վարդապետներ, անոնց թուին մէջ ինչպէս ականաւոր դէմքեր, նոյնպէս աննշան անձեր: Երկու տեսակներն ալ ծնան վարդապետներ. անոնցմէ ոմանք տեղ գտան պատմութեան մէջ, ուրիշներ խամբեցան անյիշատակ: Եղան եւ այնպիսիներ որոնք թէպէտ եղան արժանի յիշատակութեան ձեռագիրներու յիշատակարաններու մէջ, բայց առանց մասնանշումի, թէ ո'ր ճիւղին կ'անդամակցէին անոնք: Այս պատճառով ալ չեն կրնար գետեղուիլ Տոհմածառին մէջ: Եւ հարկ ալ չկայ տեղ շնորհել այդ ծառին վրայ ամէն անուան, որ Վարդապետ յորջորջումը կրած է առանց արժանաւորութեան եւ կամ յիշատակի արժանի դործք գործելու: Անշուշտ այս մտածմունքով առաջնորդուած են Վարդապետաց գաւազանաւորները յօրինողները, երբ այնպիսիները չեն առած իրենց ցանկին մէջ:

Այս տեղ կը գետեղեմ Ա բնագիրը ամբողջութեամբ համաձայն էջմիածնի Թ. 45 ձեռագրին, սարուածքի մէջ տալով Բ օրինակին ընթերցուածները:

Ամբողջութեամբ կու տամ նաեւ Շ բնագիրը, որ թէեւ կախում ունի Աէ, բայց այն ստաւելութիւնն ունի որ Մխիթար Գօշէն մինչև Յովհաննէս Համչենցի եւ Բարսեղ Գաւառցիէն մինչև Թաղէոս Խարբերոցի կը հասցնէ:

Իսկ D—L օրինակներէն կ'առնեմ այն անունները միայն, որոնք կը լրացնեն որ եւ է կերպով Ա. եւ Բ. կարգերու ձուլաւորումները:

Իրրև նմոյշ Վարդապետական վկայագրի յատաջ կը բերեմ Վարդան Վ. Բաղիշեցոյ Գրիգոր Շղթայակիրին տուած վկայագիրը, բաց թողլով ընդարձակ նախաբանը:

Ա.

ԱՅՍ ԵՆ ԱՊՐԳԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՅՆ ՄԵՐՈՅ ՈՉ ԱՌԱՋՆՈՅՆ, ԱՅԼ ՎԵՐՋՆՈՅՆ (Կարապետ Վ. Բաղիշեցոյ)

Նախ Գրիգոր Տաթևացին. եւ Նորին աշակերտն Դանիէլ:

Նորին Յովհաննէս Համչենցին:

Նորին Գրիգոր յԱրճիւոյ, որ մականունն Զորթան ասի: Նորին եւ միւս աշակերտն Թորոս վարդապետն:

Իսկ Զորթանի աշակերտն՝ Ներսէս, որ Մատաղ ասի:

Նորին՝ Ներսէս Բաղիշեցին:

Նորին՝ Ներսէս Ամիկեցին:

Նորին աշակերտքն երկու՝ Յովհաննէս Ոստանցին ի գեղջէն Վառնուշատոյ. եւ Ազարիա ի Հայոց մեծաց, ի գեղջէն Շահկերտոյ, մերձ ի քաղաքն Նախճուանայ:

Իսկ աշակերտքն Յովհաննէս Ոստանցւոյն՝ Սիմէոն Ապարանցին եւ Բարսեղ Գաւառցին:

Սիմէոնի աշակերտքն՝ Կարապետ Կալօն եւ (Կարապետ) Փարինդեցին: Եւ նորին՝

միւս Փոքր Սիմէոն ճգնաղբեացն:

Եւ Բարսեղի աշակերտքն՝ Յովհաննէս Բուժիկ Բաղիշեցին եւ այլք բազումք:

Եւ Յովհաննէսին՝ Խաչատուր մեծ բարունին:

Եւ այլ Արեւելեանքս ամէն ի Զորթանէն սերեցան:

Դարձեալ նոր սկսայց ի Յովհաննէս Համչենցոյն:

Նորին միւս աշակերտն Թորոս, որ ի վերոյ ասացաւ:

Թորոսի աշակերտն Գրիգոր Տարօնեցին:

Նորին՝ Յովհաննէս Շիրաքն:

Նորին՝ Ղուկասն, որ էր ի Խորճունեաց

ԽՈՐՃՈՒՐ. Ա կարգ: Բ այլ եւս կարգ վարդապետաց: Այսօրիկ են կարգ վարդապետաց...: 2 Բ աշակերտ: — 3 Բ համչենցին: 9 Ա Բաղիշեցի: — 11 Ա Յոհաննէս: 13 Ա աղբիւր: — 14 Բ շահկերտոյ, որ է մերձ քաղաքին Նախճուանու: 17 Ա Սիմոն: — 19 Բ աշակերտն: Կալօն. չունի եւ Փարինդեցին: 21 Բ բուժիկ Յովհ. Բաղ. 24 Բ եւ Յովհաննէսի աշակերտ Խ. Բաղիշեցին: 27 Բ յովհաննէսէ Ա համչենցին: — 33 Բ Ղուկաս:

գաւառէն ի Կեղւոյ, (Եւ) Պետրոս Կարկառեցին: 35

Եւ (նորին Ղուկասու)՝ Սրապիոն Ուրհայեցին, որ եղև կաթողիկոս սուրբ Աթոռոյն էջմիածնայ տարի մի եւ վեց ամիս. եւ իրիւցաւ առ Քրիստոս:

Այլ եւ նորին (Սրապիոնի) աշակերտքն՝ Բարսեղ, որ է ի Սասնոյ ի Նիջ գաւառէն, ի գեղջէն որ ասի Մարմանդ. եւ Յովսէփ Հզվեցին, Յովհաննէս Ուրհայեցին:

Ես նուստ Կարապետ բանի սպասաւոր Բաղիշեցի, ի գեղջէն Փարինդոյ, զոր լուայ ի պատմագրացն եւ զոր աջօք մեր տեսաք. զի չէին ինչ պակաս յառաջին վարդապետացն ուսմամբ եւ գործով. այլ եւս գերազոյն:

Այլ եւ երկու անուանի վարդապետ այլ գրեցին: 50

Յովհաննէս Անթապեցին, որ է կաթողիկոս Կիլիկեցոյ, եւ Գրիգոր Ղայսարցին յԱռաջին Հայոց, բանիրուն եւ սիրող իմաստասիրական հանճարոյ:

Յովհաննէս ի մերոց Ներսիսեանցն է. եւ Գրիգոր ի Թորոսի աշակերտացն:

էջմիածին, Թ. 45, թղ. 322բ: Ասկէ Բ (Առաքել Դաւրիթեցի, Պատմութիւն. Վազարշապատ 1896, էջ 441—442):

Բ.

(ՎԱՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԱՅՆ)

Ըստ առաջին հարցն աւանդութեանց տալով իշխանութիւն աշակերտեալ մանկանցն ըստ հրամանի Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ետ իշխանութիւն Առաքելոցն ասելով. «Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս». եւ Առաքեալք աշակերտաց իւրեանց. մինչև որ եհաս ի յեռմեծ եւ յերջանիկ բարունապետն Մեսրոպ. եւ անտի յեռմեծն Մխիթար, որ մականունն Գոշ կոչի: 10

34 Ա չունի ի (Կ.). Բ որ է Կեղի: 34 Այս տեղ բնագիրը խառնարում կ'երևայ. երբ կ'ըսուի. «... ի Կեղւոյ: Պետրոս Կարկառեցին. եւ Սրապիոն»: Ուղղեցի համաձայն Շ օրինակին: 36 Ա յուրհայեցին: 36 Բ սրբոյ... էջմիածնի: 41 ԱԲ Մարման աղբ ունին Մարմանոյ: 42 եւ] Բ եւ եւ Բ հզուեցին: Բ չունի յովհաննէս Ուրհայեցին (Ա յուրհայեցին): 43 Ա լուա. Բ լուաք: — 47 Բ յաւանոց: — 50 Բ անթապեցին: — 51 Ա դասարցին: 54 Բ ի մերոյ ներսէսեացն: 10 հոս կը սկսի Ե նախ եռամեծ եւ երջանիկ վարդապետն որ մականունն կոչի Գոշ:

Այսքան է մեր գիտցածը ներսէս Մատաղի մասին: Ան վախճանած ըլլալու է իբր 1530ին Բաղէշի նոյն մենաստանին մէջ:

Ներսէս Վ. Մովսէսյան անուանով ունինք Գանձարաններու մէջ երեք գանձ եւ մէկ տաղ: Անոնք կը գտնուին արդէն 1505ին գրուած Գանձարանի մէջ: Ինձ կը թուի թէ այս ներսէս Վ. Մովսէսյանն է ներսէս Վ. Մատաղի հետ: Յիշեալ չափական գրութիւններն են:

ա. Գանձ Վարդապետին ի ներսէս վարդապետէ:

Նախախնամող Աստուած յայտնեցար¹,

Յիսուս Քրիստոս օրհնեալ տիրարար...

Տուները կը կապեն՝ ՆԵՐՍԷՍ:

Ձեռագիրք. Երեւան, Պետ. թանգարան, Թ. 355, էջ 659—670 (= Կանայեանց, Յուցակ հայ. ձեռագրաց ներսիսեան վարժարանի, էջ 15. յամէ 1505): 359: 361: էջմ. 424: Քէշիշեան, Յուց. հայ. Ձեռ. Չմմառու, Թ. 22, թղ. 216ր (ԺՁ դար):

բ. Գանձ Վարդապ. Ս. Խաչին, ի ներսէս վարդապետէ Մովսէսյանի²:

Նշան օրհնեալ եւ փառաւորեալ,
Աստուածազարդ փայտ կենաց տրնկեալ,
Աստուածամուխ սուսեր շողացեալ,
Եւ քառանիշ աթոռ բարձրացեալ...

Տուները կը կապեն՝ ՆԵՐՍԷՍ:

Ձեռագիրք. Երեւան Պետ. թանգարան, Թ. 355, էջ 690—703 (= Կանայեանց, ցուցակ հայ. Ձեռ. ներսիսեան վարժարանի, էջ 15):

գ. Գանձ Շողակաթին Եկեղեցւոյ:

Ներբողական բառը հրաշալի,
Քեզ երգեսցուք միածին որդի.
Օրհնեմք զանուն քո սուրբ սոսկալի,
Բարեբանեմք զքնութիւնդ սքանչելի...

Տուները կը կապեն՝ ՆԵՐՍԷՍ:

Ձեռագիրք. Թաւրիզի Թ. 43, թղ. 337ա—39բ (= Աճառեան, Յուց. Թաւրիզի հայ. ձեռագրաց, էջ 36). ասկէ՝ Աճառեան, Գանձարան, թղ. 458:

¹ Ուրիշ ձեռագիրներ (Երեւան, Թ. 359, 361. էջմիածին, Թ. 324) առաջին տողն ունին. «Ներսէս Վ. Վարդապետի վարժարանի վարժարար...»:
² Ձեռագիրք խորագրին մէջ ունի. «Ի ներսէս վարդապետէ», իսկ լուսանցքի վրայ. «Ի ներսէս վարդապետէ Մովսէսյանի»:

դ. Տաղ Վարդապետի ի Մովսէսյան ներսէս վարդապետէ:

Այսօր ցընծայ լեռոն Թափօր եւ զուարճանայ մեծն Ահերմոն.

Քանզի լոյսն աստուածային այսօր ծագեաց յայն սուրբ լերին,

Ա՛յ ցընծայ լեռոն Թափօր եւ զուարճանայ մեծն Ահերմոն...

Ձեռագիրք. Անտոնեանց ի Չմմաս, Թ. 100, թղ. 244բ—245ա (ԺՁ). Քիւրտեան, Տաղարան յամէ 1681. Բերլին, Պետ. Մատենադարան, Թ. 67, թղ. 225բ: Երեւան, Պետ. թանգ. 1026, թղ. 12բ (1595). էջմ. 45, թղ. 324ա (1642). 2398, թղ. 145բ (1613). Վիեննա Միսիթ. Մատ. 343, 83ա (Ժէ), 401, 129ա (Ժէ). 577, 83ա (ԺԷ), 745, 246ա (Ժէ). 1002, 174ա (Ժէ) եւ այլն: Հրատարակուած՝ Բաղմալէպ, 1864, էջ 234—235, առանց անուան հեղինակի:

Ձեռագիր Տաղարաններ առ հասարակ անանուն ունին տաղս: Բերլինի ձեռագիրն խորագրին մէջ ունի «Ի Մովսէսյան ներսիսէ» Քիւրտեանի Տաղարանը՝ «Տաղ Վարդապետի Գ. աւուր Մովսէսյան ասացեալ» իսկ Անտոնեանց ձեռագիրը խորագրին մէջ ունի. Տաղ զեղեցիկ երրորդ օրն» (Վարդապետի) եւ ստորին լուսանցքի վրայ «Ի Մովսէսյան ներսէս վարդապետէ (ասացեալ է) տաղս»:

Իբրեւ ճաշակ ներսէս Մովսէսյան ոճին կը հրատարակեմ տաղս համաձայն A (Անտոնեանց Թ. 100), B (Բաղմալէպ 1864), Վիեննայի C (Թ. 745), D (Թ. 1002), E (Թ. 343) ձեռագիրներու:

ՏԱՂ Ի ՎԱՐԴԱՎԱՊԵՏ Ի ՄՈՎՍԷՍԻ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍՏԵՆԱԼ

Այսօր ցընծայ լեռոն Թափօր,
Եւ զուարճանայ մեծն Ահերմոն.
Քանզի լոյսն աստուածային
Այսօր ծագեաց յայն սուրբ լերին.
Ա՛յ ցընծայ, ա՛յ ցընծայ
Լեռոն Թափօր եւ զուարճանայ:

Այսօր Թափօր լեռոն ուռճացեալ,
Լուսատեսիլ ծագկով լրցեալ.
Քանզի Յիսուս մարմնով ծաղկեալ,
Եւ զԱզամայ փառքն ցուցեալ.
Ա՛յ ցընծան, ա՛յ ցընծան,
Ազամ ՚ւ եւա եւ զուարճանան:

Այսօր շողէր շուշան յովտին,
Եւ շողշողէր դէմ արեւին.
Քանզի լոյս աստուածային
Իջեալ ցողէր այն ծաղկընին.
Ա՛յ ցընծան, ա՛յ ցընծան
Ծաղկունքդ ամէն եւ զուարճանան²:

Այսօր վարդն անուշահոտ
Բուրեաց ըզհոտն աստուածական,
Փթթեալ հասակն երեսնամին
Յայտնեաց զձածուկ լոյսն ի մարմին,
Ա՛յ ցընծայ, ա՛յ ցընծայ,
Վարդերդ ամէն եւ զուարճանան³:

Այսօր մեծ Վարդըն վառեալ,
Կարմիր սպիտակ լուսով փայլեալ.
Կանաչ դեղով գունաւորեալ⁴,
Ապա զդեղին լոյսն ցուցեալ.
Ա՛յ ցընծայ, ա՛յ ցընծայ,
Վարդըն վառեալ⁵ եւ զուարճանայ:

Այսօր լուսին նոյն արեգական.
Եւ աստեղաց պարքն ամենայն,
Տեսին ըզտէրն արփիական,
Իւրեանց լուսոյն նըւաղեցան.
Ա՛յ ցընծան, ա՛յ ցընծան
Աստղունք ամէն⁶ եւ զուարճանան:

Այսօր Մովսէս մեծ մարգարէն,
Կենդանացեալ գերեզմանէն,
Եկն ի Թափօր մօտ ի Որ էն,
Ունէր գտախտակըն քարեղէն.
Ա՛յ ցընծայ, ա՛յ ցընծայ,
Սուրբ մարգարէն եւ զուարճանայ⁷:

Այսօր եկեալ մեծն Եղիա,
Որպէս եկեալ ի Քորերայ.
Դաւանէր ՚ւ երկըրպազէր,
Աստուած ասէր ըզՄեսիա,
Ա՛յ ցընծայ, ա՛յ ցընծայ.
Սուրբ մարգարէն⁸ եւ զուարճանայ:

¹ Ձեռագիրք առաջին տան հետեւելով առ հասարակ եղակի կը գրեն «ցընծայ», ուղղեցինք ուր պէտք էր:
² Այս տունը ունի միայն A:
³ A ունի «Այսօր մարգարէն եւ զուարճանայ»:
⁴ B կանաչ գունով գեղաւորեալ. CDE կ. դեղով (D գեղով) գունաւորեալ:
⁵ D վարդերու ամէն...:
⁶ E լուսին ՚ւ արեւ...:
⁷ Այս երեք տուները չունին A:
⁸ B սուրբ Եղիա...:

Այսօր Մովսէս նոյն Եղիայի
Խօսին գելիցն ընդ Քրիստոսի,
Տէր փութով եկ ի խաչի⁹
Ձի դու փըրկիչ ես աշխարհի.
Ա՛յ ցընծան, ա՛յ ցընծան
Սուրբ նահապետքն եւ զուարճանան:

Այսօր Մովսէս լալով ասէր
Հոգիքն ամէն քեզ կու մընան,
Ձի դու գաս եւ չարչարիս,
Եւ ազատես զհոգիս նոցա.
Ա՛յ ցընծան, ա՛յ ցընծան
Արդար հոգիքն եւ զուարճանան:

Այսօր Պետրոս, Յակոբ, Յոհան
Հետ Քրիստոսի ի լեռն ելան,
Լըւան զբարբառն հայրական,
Դա է որդի իմ սիրական.
Ա՛յ ցընծան, ա՛յ ցընծան,
Յակոբ, Յոհան եւ զուարճանան¹⁰:

Այսօր Պետրոս վէժ պատրաստէր,
Տաղաւարաց հիմն արկանէր.
Բայց Յիսուս խորան շինէր,
Իւր սիրելեացն տեղ պատրաստէր.
Ա՛յ ցընծան, ա՛յ ցընծան
Սուրբ ճըզնաւորքն եւ զուարճանան:

Այսօր հոգին ամպ երեւեալ,
Իւր էակցին հովանացեալ,
Ճառագայթիւք զփըրկիչն յայտնեալ,
Յառաքելոց գունդըն հանգեալ.
Ա՛յ ցընծան, ա՛յ ցընծան
Սուրբ առաքեալքն եւ զուարճանան:

Այսօր Հայր յամպոյն ձայնեալ,
Եւ Միածնին իւր վըկայեալ.
Դա է որդին իմ մարմնացեալ,
Հոգւովս ի դմա եմ հանցեալ.
Ա՛յ ցընծան, ա՛յ ցընծան
Երկինք ՚ւ երկիր եւ զուարճանան:

6. ՆԵՐՍԷՍ Վ. ԲԱՂԻՇԵՅԻ

Ներսէս Վ. Բաղիշեցի, հայրենեօք Մովսէսյան, ձեռնասունն էր ներսէս Վ. Մատաղի, որուն գործակիցն եղաւ Խնդրակատարի նորոգութեանց ժամանակ եւ անոր մահէն ետքը յաջորդը առաջնորդութեան: Ներսէսի ծնըն-

⁹ A խաչին. B ի խաչն եւ C տէր փութով ի խաչն արեւ:
¹⁰ Այս տունը ունի միայն B:

դավայրն էր Մովսէսը. բայց կոչուած է Բաղի-
շեցի, երկար ժամանակ Բաղէշ սպարած ըլլա-
լուն համար: Կը յիշուին իր հայրն՝ Յակոբ
քահանայ եւ մայրը՝ Ծնոհաւոր: Ներսէս
վախճանեցաւ 1573/4ին: Չունինք իրմէ գրա-
ւոր երկասիրութիւն: Իր աշակերտն է Ներսէս
Վ. Ամկեցի: Ժամանակակիցները գովու-
թեամբ կը յիշեն զինքը: Յատա՞ իր բերեմ:

ա. Հերայեան գրիչ 1534ին ի վայելուցին
Ներսէս Բաղիշեցւոյ կ'օրինակէ Տաթևացւոյ
Քարոզչոց Բ. հատորը¹⁰. ուր կը գրէ.
«Ձրստացող քարոզ սուրբ գրոցս զՆերսէս
բարունապետն եւ զԾնաւոյն իւր յիշեցէք ի
Քրիստոս Աստուած...: Գրեցաւ ՁԶԳ թղթին
ի դուռն Խնդրակատարն»: Կը գրէ նաեւ ստա-
ցիչը նորագիր (Թղ. 359բ). «Ձստացող սո-
րայ զՆերսէս Բաղիշեցի վարդապետն եւ
զԾնաւոյն իմ զԱկոր քահանայն եւ զԾնոհաւորն
յիշեցէք ի Քրիստոս, որ ստացաւ զսայ ի հա-
լալ արդեանց իւրոց» (Էջմիածին, Թ. 2077):

բ. Կարապետ գրիչ Խլաթի Սողած գիւ-
ղին մէջ 1542ին կ'օրինակէ Աւետարան մը եւ
կը խնդրէ յիշել «զվարդապետն եւ զբարու-
նապետն Ներսէս, որ տղայ տիաւք եւ երիտա-
սարգ հասակաւ գտեալ տաղանդն շահեցուց
ըստ Աւետարանին. եւ ստացաւ զսուրբ Աւե-
տարանս յարգար վաստակոց իւրոյ յիշատակ
հոգւոյ իւրոյ եւ ծնաւդացն՝ հօրն Յակոբ քա-
հանային եւ մաւրն Ծնաւորին, եւ եղբարցն
Աղուպշին եւ Մուրատշին, Դարմանին. եւ
քրեւրն Քնքուշին եւ որդոյն որդին Յակոբ
քահանային եղբարն Վարդանին» (Բրիտ.
Թանգարան, Թ. 19 (Conybeare, Catalogue
p. 34):

գ. Վարդան քահանայ 1567ին «ի Բաղէշ
քաղաքի եղերն, ի գեօղն Մար-Գորգ, ընդ
հովանեաւ Ս. Գէորգեայ զօրակարին» եւ «ի
մերոյ սուրբ ուխտի առաջնորդութեան Խըն-
դրակատար Ս. Աստուածածնին՝ Ներսէս բա-
նիրուն եւ երջանիկ բարունապետին» կ'օրի-
նակէ Գանձարան մը եւ կը խնդրէ յիշել ստա-
ցիչն Ներսէս բարունապետը, «որ գԳանձա-
րանս ետ գրել յիշատակ (մօրն) Ծնորհաւո-
րին, եղբօրն Մուրատշին եւ քրեւրն Քնքու-
շին...: Դարձեալ յիշեցէք զբարունապետն
մեր գտէր Ներսէս Բաղիշեցին եւ զհոգեւոր
գաւակնն, որ ես աշակերտք իւր՝ զՆերսէս
բանիրուն եւ քաջ բարունապետ Ամկեցին,
զՀերայեան վարդապետ, գԳաւթ վարդա-
պետ, զՅովհաննէս վարդապետ եւ զԳրիգոր

աշակերտն. եւս առաւել զմիարանքն իւր՝
զՂազար արեղայն, որ յայտմ ամի հէրպետ
էր, եւ զՅակոբ կրօնաւորն եւ զԱրրահանն
եւ զայլսն ամենայն՝ զօտար եւ զբնակսն,
զանտես եւ զսարկաւազուռնս, զմշակս եւ զսո-
նոսիկ, որ երախտիք եւ աշխատանք ունին ի
վերայ սուրբ վանուցս: Դարձեալ յիշեցէք...
զտէր Ներսէս, որ ետ գրել զայս Գանձարանս
եւ զԱւետարանն եւ զերկու ձեռք ժամու հան-
դերձն, զպղնձագործ Մախոսուտի արտերն,
զմահանսի Մուրատի արտն. եւ արծաթի
սկիւճ մի ետ շինել եւ եղ ի դուռն Խնդրակա-
տար Ս. Աստուածածնին յիշեցէք եւ յիշատակ»
(Թորոս Աղբար, Բ. 256—257):

դ. Բաղէշի Յայտաւորքի մը յիշատակա-
րանը յառաջ կը բերէ Գ. Վ. Սրուանձտեանց
այսպէս. «Արդ այսպիսով լուսագարդ տառիս
ցանկացող եղեւ տէր Ներսէս մեծ բարունա-
պետն... բայց վա՞ր է ինձ... որ ոչ ետես
կատարեալ զգիրքս, այլ փոխեցաւ առ Աս-
տուած...: Եւ ես յաւարտ հանի զսա յաս-
տուածապահ քաղաքս Բաղէշ, զի սկիզբն
գրոցս ի գիւղն Հօրմըղ եղի, ընդ հովանեաւ
սուրբ Քրիստոսիոր զօրավարին, եւ զաւարտ
գրին ի գեօղն ի Մարգորգ, ընդ հովանեաւ
սուրբ Սարգիս զօրավարին: Չոր ի նեղել Բա-
յիկցուն ելայ եւ եկի ի քաղաքս Բաղէշ եւ աստ
աւարտեցի զգիրքս ծաղկելով եւ կազմելով
ընդ հովանեաւ սուրբ Սարգիս զօրավարին եւ
սուրբ Աստուածածնին եւ սուրբ Ստեփանո-
սին եւ Գէորգեայ զօրավարին. ի հայրապե-
տութեան տէր Գրիգոր կաթողիկոսին եւ
մերոյ առաջնորդի Խնդրակատարի Ներսէս
բարունապետի Ամկեցւոյն...: Ի փաթշա-
հութեան աշխարհիս ինքնակալ խոնդարին
սուլթան Մուրատին, որ յայտմ ամի... եղեւ
նոր փաթշահ: Ի թուականին Հայկազնեան
տուճարիս յիննհարիւր եւ ի ԿԶ ամին» (Թո-
րոս Աղբար, Բ., 260):

Թուականը «ՁԿԶ» (1517) թէ կ'նշպէս
մուտ գտած է հոս, չեմ կրնար մեկնել. բայց
պէտք է կարդալ ՌԻԳ (1574). վասն զի Մու-
րատ Գ. այս թուին դահ բարձրացաւ եւ դար-
ձեալ այս թուին Հայոց կաթողիկոսն էր Գրի-
գոր: Երուսաղէմի Թ. 135 Գանձարանը կ'օրի-
նակուի «ի հայրապետութեան սուրբ աթոռոյն
Էջմիածնին տէր Գրիգոր կաթողիկոսին եւ
ի թագաւորութեան Տաճկաց Մուրատ փա-
շահին... ի թուականութեան հայկազեան
տուճարիս ՌԻԳ» ի Սողած (Խլաթ):

Ներսէս Վ. Բաղիշեցւոյ աշակերտներն են
ըստ այտմ.

- ա. Ներսէս Վ. Ամկեցի.
- բ. Հայրապետ Վ. Գուճաճեց.
- գ. Դաւիթ Վ.
- դ. Յովհաննէս Վ.
- ե. Գրիգոր աշակերտ:

Հայրապետ վարդապետի գրչէն ունինք
հետեւեալ Յիշատակագրութիւնը. «Եւ արդ
ես նուատոս եւ յետինս ի սպասաւորաց
բանի, Հայրապետ վարդապետ, ամենայն
կարգաւորաց եւ առաջնորդաց եւ վարդապե-
տաց հող եւ փոշի, վասն Աստուծոյ եւ վասն
սրբութեանդ ձեր վերատին նորոգեցի եւ կազ-
մեցի զպատուական եւ զվարդապետութիւն
այս Հարանց վարքս եւ կանոնք ամենայն
սրբոցն եւ ողեշահ ընթերցաւորաց եւ հաւա-
տարիմ ունկնդրաւորացն ի թղթն ՁԶԶ. նորո-
գեցաք, զի մնացէ ի դուռն Խնդրակատար
սուրբ Աստուածածնին ի բարի եւ անշինջ յի-
շատակ զբաւորացն եւ զնաւորացն եւ աշխատա-
ւորացն ի սմայ եւ մանաւանդ ինձ անարժա-
նիս՝ Հերայեան, մականունն Գուճաճեց կո-
նիս՝ Հերայեան, մականունն Գուճաճեց կո-
չեցեալ, զի ես մեղուցեալս աղաչեմ զձեր
սրբութիւնդ, պատուական ընթերցողք,
հայրք եւ եղբարք իմ, ուղիղ սրտիւ եւ բո-
լոր հաւատով մեղաց թողութիւն խնդրեցէք
աշխատողացն եւ ինձ եւ ծնողաց իմոց Վար-
դանին եւ Խ(ո)նդքարին. ամէն: Եւ արդ մի
ոռւածածնէս. զի թէ ոք յանդիմնի, նորմաւ
եղեցի, ամէն: Հայր մեր որ յերկինս»: Վե-
նետիկ, Թ. 265 (Ոսկեփորիկ). տես չ. Բ.
Սարգիսեան, Յուլիան, Բ. էջ 860:

Ձինքը կը յիշէ նաեւ Վարդան գրիչ
1567ին.

7. ՆԵՐՍԵՍ Վ. ԱՄԿԵՑԻ (ԳՆՈՒՆՅԻ)
1574—1586^o

Խնդրակատարի Դպրոցին սկանաւոր դէմ-
քերէն է Ներսէս Ամկեցի, կոչուած նաեւ
Գնունցի եւ Հետեակ (Հետիտոն), որդի
Գնունցի եւ Հետեակ (Հետիտոն), որդի
Մհերի եւ Քնքուշի. կը յիշուին իր եղբայր-
ներէն Վարդանէս, Յովհաննէս եւ քոյրն
Դուրվանդ: Վարդանէս կ'ամուսնանայ Մըր-
մաթի հետ, եւ կ'ունենայ ուստր մը՝ Յակոբ
սարկաւաք:

Ներսէս Ամկեցի էր ուսուցչին Ներսէս Վ.
Բաղիշեցւոյ մահէն ետքը կը կարգուի Խըն-

դրակատարի առաջնորդ եւ վարդապետ: Կը
յիշուէր 1567ին (տե՛ս § 6):

Յակոբ սարկաւաք, Ներսէս Ամկեցւոյ
եղբորորդին 1569ին կ'օրինակէ «ի սուրբ
ուխտս Խնդրակատար ի Բաղէշ քաղաքի»
Ազաթանգեղոս մը, «ի խնդրոյ Ներսէս բա-
րունապետի» եւ «ի յիշատակ հօր Մհերին եւ
մօր Քնքուշին եւ եղբօր Վարդանէսին».
այլուր կը գրէ. «Ես Յակոբ սարկաւաք որ
աշխատեցայ եւ ձեռամբ իմով գրեցի զսուրբ
գիրքս յիշատակ հաւերդար իմոյ Ներսէս
բարունապետին». կը խնդրէ յիշել «զուսու-
րաբունապետին». կը խնդրէ յիշել «զուսու-
րուն զԱստուածատուր վարպետն Ամկեցի».
«Քրիստոս Աստուած ողորմի... իմ հօրեղ-
բօր Ներսէս քաջ բարունապետ վարդա-
պետին... եւ աշակերտեալ մանկանց տէր
Մկրտիչին եւ տէր Յովհաննէսին, որ բա-
ղում աշխատութեամբ աշխատեցան ի կար-
դալ գրոց»: «Յիշեալք... զՆերսէս բարու-
նապետն Ամկեցին», «եւ զհոգեւոր հայրն իմ
զԱմկեցի Ներսէս քաջ բարունապետն, որ ետ
զձագրել յիշատակ իւր» (Էջմիածին, Թ. 1921.
համ. Ազաթանգեղոս, քննական հրատ. էջ
ԵԳ.—ԺԴ.):

Ներսիսի գործունէութեան պատկերը կը
գծէ Վարդան Բաղիշեցի այսպէս. «Ներսէս
Ամկեցին, որ եղեւ յոյժ խոհեմ եւ կորովի եւ
իմաստուն ի յաստուածաբանութեան հին եւ
նոր կտակարանաց, մինչ զի համբաւ տարա-
ծեցաւ ընդ ամենայն տեղիս եւ յօժարեցոյց
զբաղումս. զոմանս յաշակերտութիւն սուրբ
Գրոց եւ զայլս ի լուր խրատական խօսս իւր:
Եւ ի վերայ ամենայն բարեգործութեանց, զոր
ունէր՝ զխախտեալ տեղիսն, թէ պարիսպն եւ
թէ խցերն նոր նորոգեաց բազում աշխատու-
թեամբ: Այլ եւ զԿարմնճի արան քսան ոսկի
գնեալ եւ արար յիշ ի դուռն Ս. Աստուա-
ծածնին» (Բանասէր, անդ, էջ 293—294):

Իր գովութիւնը կ'ընէ Գրիգոր Դարա-
նաղցի հետեւեալ տողերու մէջ. «Հետեակ
մականունն Ներսէս մեծ աւագ վարդապետ...
որ հետիտոս շրջէր ամենայն ուրեք, վասն
որոյ Հետիտոս անուանեցին տեսողքն. եւ էր
ի ժամանակս Մեծ Եփրակին Ամթայ: Եւ այս
Ներսէս բազում աշակերտս եհան...: Եւ այս-
պէս ասէին թէ Ներսէսն ի Եփրակն զբուց
զրկելով բանս մեղադրանաց, թէ Այսչափ
ժամանակի վարդապետ գորով դու եւ աշա-
կերտք ընդէ՞ր ոչ հաներ: Եւ նա այլ անդրա-

դարձութեամբ պատասխանի առնելով նմա, թէ նապաստակն եւ աղուէսն յամենայն ամի հանապազ ծնանելով, ապա ծնեալքն աղուէսք են եւ նապաստակք, անզօրք են եւ տկարք. եւ առիւծն յերիս ամս մի անգամ ծնանելով երկու կամ մին կորիւնս, ապա ծնեալքն առիւծք են եւ հզօրք եւ թագաւոր ամենայն գազանաց: Եւ Շիրակ վարդապետն զայս պարծանաց մեծաբանութիւնս ի դէմ Դուկասին (Կեղեցւոյ) եւ Պետրոսին (Կարկառեցւոյ) եւ Սրապիոնին (Ուռհայեցւոյ) վասն ասէր: Եւ այս ներսէս Հետիոտս այլ քան զնորին պանծացածն թէ որ յաւելիք չէին, նա պակասք այլ չէին» (Ժամանակագրութիւն, էջ 391):

Լէոնարդոյ Սիդոնի եպիսկոպոսը, որ 1583/84 թուին արեւելք գացած էր եւ Հայոց եկեղեցւոյ մասին տեղեկութիւններ հաւաքած, կը գրէ 1587ին առ Սեքստոս Քահանայապետ ուղղած Տեղեկագրին մէջ¹⁷. Այս շրջանին Հայոց եկեղեցւոյ «ամէնէն հուշակաւոր վարդապետներն են ներսէս Վ. Բաղէշի, Դուկաս Վ. Ամթայ եւ Արիստակէս Վ. Անկիւրիոյ¹⁸»:

Այս թուին, երբ կը գրէր իր Տեղեկագիրը Սիդոնի արքեպիսկոպոսը, ներսէս Վ. Ամկեցի վախճանած ըլլալու է:

Իր մահուամբ կազմալուծուեցաւ Խընդրակատարի Դպրոցը: Պատճառը վերագրելու է Յովհաննէս Վ. Բրօնեցւոյ, որ Ամկեցւոյ յաջորդն եղաւ Խընդրակատարի առաջնորդական աթոռին վրայ: Սա կ'երեւայ թէ չունէր ատակութիւն շարունակելու ներսիս ուսուցչական դործունէութիւնը: Ամկեցւոյ աշակերտները կամաց կամաց հեռացան Բաղէշէն. գացին Ոստան, ուր մերձակայ Ս. Եղիշէ վանքին մէջ նոր Դպրոց բացած էր Յովհաննէս Վ. Բրգութենց, ներսիս աշակերտներէն:

Բրգութենցէն գաւազանի իշխանութիւն առին Բարսեղ Վ. Բաղիշեցի (Կարպեղացի) եւ Սիմէոն Վ. Ապարանցի, որոնք ժամանակ մը աշակերտած էին ներսէս Ամկեցւոյ: Ասոնցմէ Բարսեղ Բաղիշեցի վերագրածաւ Բաղէշ եւ հաստատուեցաւ Ամիրտօլու վանքը, ուր եւ բացաւ նոր դպրոց: Իսկ Սիմէոն Ապարանցի իր կարգին ունեցաւ աշակերտներ, որոնցմէ Կարապետ Վ. Փարխնդեցի ապա

դործեց Խընդրակատարի մէջ, միւսանգամ ծաղկեցնելով Դպրոցը:

Ի Բաղէշ նոր Դպրոց մ'ալ ծաղկեցաւ Գոմաց վանքին մէջ. հոս կը նստէր Բաղէշ քաղաքի եպիսկոպոսն Մեսրոպ, որ 1640ին Փիլիպպոս կաթողիկոսէն վարդապետական իշխանութիւն առաւ եւ հաւաքեց իր շուրջը աշակերտութիւն:

Նկատի առնելով այս Դպրոցները, կարելոր կը համարեմ տալ նախ պատկերի մէջ Արեւելեան վարդապետաց կարգը, եւ ապա խօսիլ անոնց մէջ անուանի հանդիսացած դէմքերու վրայ:

Խընդրակատարի առաջնորդական աթոռի վրայ ներսէս Ամկեցւոյ յաջորդեցին.

1. Յովհաննէս Վ. Բրօնցի.
2. Կարապետ Վ. Բաղիշեցի (Փարխանդեցի).
3. Պետրոս Վ. Գաւաշցի.
4. Յակոբ Վ. Ծերունենց Բաղիշեցի.
5. Դաւիթ Վ. Բաղիշեցի.
6. Աւետիք վարդապետ († 1710). 1693ին նորոգեց Խընդրակատարը:
7. Աբրահամ Վ. Ալամեցի, որդի Սարգսի († 1723):
8. Երեմիա Վ. որդի Զլկցի Յովհաննէսի.
9. Աբրահամ Վ. որդի տէր Դուկասի († 1749).
10. Սահակ արքեպ. որդի Փարխանդեցի Գարրիէլի. ընտրուած 25 դեկտ. 1749:

Այս առաջնորդներու մասին խօսուած է Խընդրակատարի Յիշատակաց Մատենին մէջ:

8. ԿԱՐԳ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՅ
1. Ներսէս Վ. Ամկեցի (Գնունցի).
 - ա. Յովհաննէս Վ. Բրգութենց Ոստանցի.
 - բ. Ազարիա Վ. Շահկերտցի (Ջուղայեցի).
 - գ. Յովհաննէս Վ. Ծարեցի.

Սա 1588ին ինքզինքը «աշակերտ մեծ բառունապետին ներսէսի Գնունեցւոյն» կը կոչէ. էջմիածին, Թ. 1121:

- դ. Յովհաննէս Վ. Յովիկ Բաղիշեցի. իր մասին՝ Գր. Դարանաղեցի, էջ 371, 378—380:
- ե. Կարապետ Վանեցի, Չագ կոչուած. † 1604.

Իր մասին՝ Դարանաղեցի, 371—375: Բրգութենց Յովհաննէս վարդապետէն ստացած գաւազանի իշխանութիւնը:

գ. Սիմէոն Ապարանցի:
Վարդապետական գաւազանը ստացած Յովհ. Բրգութենցէն:

Գր. Դարանաղցի կը գրէ թէ Ամկեցին ունեցաւ «եւ այլ փոքունք եւ անշանք յոչունք, զոր մեք ոչ լուաք»: Ասոնց թուին մէջ ըլլալու է տէր Մկրտիչը. էջմիածին, Թ. 1920, թղ. 246ր:

2. Յովհաննէս Վ. Բրգութենց Ոստանցի. ա. Բարսեղ Վ. Բաղիշեցի «Մեծն».
- բ. Սիմէոն Վ. Ապարանցի «Մեծն».
- գ. Կարապետ Վ. Վանեցի «Չագն»:
- դ. Հայրապետ Մովսէսի.
- ե. Յովհաննէս Բուժիկ:
Վերջին երկուքը Բարսեղ Բաղիշեցիէն առին գաւազանի իշխանութիւնը:
3. Ազարիա Շահկերտցի (Ջուղայեցի). ա. Յովհաննէս Վ. Անթափցի.
- բ. Յակոբ Վ. Զէյթունցի.

Գործեց Կարին, Բարերդ եւ Ռոզոստոյ, † 1608: Իր մասին Գր. Դարանաղցի, 31, 69, 319—320 եւ այլն:

- գ. Մեսրոպ Վ. Տաթեւացի.
- դ. Մկրտիչ Վ. Խարբերդցի «Խղճուկ».
- Իր մասին Գր. Դարանաղցի, 320, 410, 429. Սիմէոն Լեւոնցի, էջ ԺԹ—Ի, 33 եւն:
- ե. Դանիէլ:
Վերջինս կը յիշէ Յովհ. Այնթափցի 1586ին: Դարանաղցին, որ յանուանէ թուած է առաջին չորսը, կ'աւելցնէ. «եւ այլ աշակերտք բազումք»:

4. Կարապետ Վ. Չագ վանեցի.
ա. Մարտիրոս Վ. Արահու Վանեցի:

Մուշի Առաքելոց Վանքի Հարանց Վարքի մէջ կ'ըսուի 1609ին. «Ութ վարդապետք էին յերուսաղէմ. Մեծն Բարսեղ Ախպակեցին... Մարտիրոս Վանեցին: Դարձեալ Մարտիրոս Վանեցին, որ աշակերտ էր Կարապետ Չագ վարդապետին»: Կարապետ վարդապետ Եօթը տարի կը ճգնի Վարագի վանքին մէջ. 1604ին Պարսիկներէն զերի կը տարուին իր եղբոր որդիք. կ'երթայ Ասպահան ազատելու զանոնք եւ ժողովուրդը մխիթարելու: Հոն կը վախճանի նոյն տարւոյն: Մարտիրոս կ'երթայ Նոր Ջուղայ եւ կը փոխադրէ մարմինը թայ Նոր Ջուղայ եւ կը փոխադրէ մարմինը Գր. Դարանաղցի, 371—375: Մարտիրոս վարդապետ կը գործէր ի վարագ:

բ. Պօղոսի Վ. Մովսէսի:
Հմմտ. Հայապատում, Բ., 611: Ակիւնեան, Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 174—183:
Բարսեղ Վ. Բաղիշեցի (Կարպեղացի).
ա. Հայրապետ Վ. Մովսէսի (Ասկնջաւցի).

Հայրապետ ներսէս Մովսէսի հօրեղբայրն էր. Առ. Դաւրիթեցի, 394: Գրիգոր Մովսէսի 1602ին կ'օրինակէ Դիոն. Թրակացւոյ Քերականութիւնն Վասպուրականի Կարմաւոր վանքը «յիշատակ արի եւ քաջ վարդապետին տէր Հայրապետ բարունոյն եւ աշակերտեալ մանկանն իւրոյ տէր ներսէս նորարողը ծաղկին... եւ իւր ուսուցանողին տէր Բարսեղ... անյաղթ փիլիսոփային» Երուսաղէմ, Թ. 1311:

- բ. Յովսէփ Ողմեցի.
- գ. Յովհաննէս Բաղիշեցի «Բուժիկ»,
- դ. Ներսէս Վ. Մովսէսի «Բեղլու».
- ե. Մատթէոս Անթափցի.
- գ. Յովհաննէս Կորովամիտ:

Մարտիրոս Հիլանցի 1594ին կ'օրինակէ Աստուածաշունչ մը Բարսեղ վարդապետի համար, ուր կը խնդրէ յիշել «զտէր Բարսեղ եւ... զհոգեւոր որդիքն զՅովհաննէս եւ զՀայրապետ աշակերտքն». Թորոս Աղբար, Բ. 263: Յովհ. Բաղիշեցի եւ Հայրապետ Մովսէսի Յովհ. Բրգութենցի աշակերտներն էին. Կարայ գաւազանի իշխանութիւնը առին Բարսեղը. էջմիածին Թ. 2605: Իսկ Կիրակոս եւ Անանիա, որոնք աշակերտած էին Բարսեղը, գաւազանը առին Սիմէոն Մովսէսիցէն:

6. Յովհաննէս Վ. Անթափցի.
ա. Ներսէս Վ. Սերաստացի կաթողիկոս Սիսի (1648—1654): Իր մասին Բարգէն կաթողիկոս, անդ, էջ 339—358:
- բ. Մինաս Վ. Երզնկացի. Գր. Դարանաղցի, էջ 333:
- գ. Ղազար Վ. Բարբերդցի † 1634. Դարանաղցի, էջ 409:
- դ. Մինաս Քացախ, Կաթողիկոս Սիսի 1621—1632: Վարդապետական գաւազանը առած Մ. Երզնկացիէն. իր մասին՝ Բարգէն կաթողիկոս, անդ, էջ 299—304:
- ե. Յակոբ Ճգնիկ, որ եւ թիկ կոչուած. † 1615. Դարանաղցի 336:
- գ. Մեսրոպ Պուղտանցի † 1626. Դարանաղցի 428:
- է. Աստուածատուր վարդապետ. Բարգէն կաթողիկոս, անդ, 300:

¹ Revue de l'Orient chretien, 3 (1898), p. 201.

tre secoli il buon gusto non solo di poetare, ma di favellare persino il puro linguaggio letterale. Նոյնպէս ի փոխումն Աստուածածնի ստանաւորը գրուած է con uno stile molto elegante e superiore di assai a quello, che si costumava al suo tempo (Quadro 152):

ՆԵՐՍԷՍ Վ. ՄՈՒՍՅՈՒՅ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մովսէսը մասին առաջին անգամ խոսած է Հ. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գ (Վենետիկ 1786), էջ 565, ուր յիշած է նաեւ իր գրութիւններէն Երկուքը. «Այս Ներսէս Մովսէսի գործը վարժ ի շարագրութիւնս բանից՝ արար ճառս ինչ եւ յօրինեաց ստանաւոր բանիւ զՊատմութիւն փոխման Աստուածածնին հանդերձ գովեստիւք. եւ զՊատմութիւն պատկերի նորա. եւս եւ զՊատմութիւն ամանն Երուսաղէմի ի Սալահաղինայ. զի թէպէտ եւ այսօրիկ կային շարագրեալ յագգին մերում, բայց սարար ստանաւոր. եւ մի յաշակերտաց սորա Ստեփաննոս անուն՝ յաւել ի Պատմութիւն պատկերի Աստուածածնին երգարիւր տուն եւս»:

Այս գրութիւնները իրեն ծանօթ եղած են Մխիթարեան Մատենադարանի Թ. 171 ձեռագրէն: Նոյն ձեռագիրը աչքի առաջ ունեցած են նաեւ Նոր Հայկազնեան Լեզուի Բազմաբնի հեղինակները, երբ կը գրեն. «Ներսէս Մովսէսի՝ նորոգիչ Լիմն անապատի ի սկզբան ժէ. դարու, որոյ են ստանաւոր ողբ ի վերայ Երուսաղէմի, եւ ստանաւոր ի Վերափոխումն Կուսին, պարզ եւ վայելուչ բանիւ քան զյետնեալ ոճ ժամանակին» (Նախադուռն, էջ 16ր): Աւելի ընդարձակ նկատի առած է գրութիւններս Quadro della storia letteraria di Armenia գործին հեղինակը Գերապոյժաւ Placido Sukias Somal, Վենետիկ 1829, էջ 152—153):

Չարմանալի է արդարեւ, որ անտեսելով այս հեղինակներու գնահատութիւնները՝ Հ. Գ. Չարմանալեան իր գործին մէջ Պատմութիւն հայերէն գրութեան, Բ. Նոր մատենագրութիւն. Բ, ապ. Վենետիկ 1905, Ներսէս Մովսէսը անունը միայն յիշած է (էջ 197), առանց գրութիւններու վրայ խօսք ընելու:

Նորագոյն շրջանին ուշագրութիւն դարձուց հայ միջնադարեան տաղասացի Նորայր Վ. Ծովական, Միջնադարեան տաղասաց-

ներ. Ներսէս Վ. Մովսէսի. էջմիածին ամսագիր Վաղարշապատ 1944, Թ. 11—12, էջ 32—35: Հեղինակը, որ Մովսէսը կենսագրութեան մասին իր տեղեկութիւնները քաղած է Առաքել Դաւրիթեցիէն, Ժէ. դարուն միակ Ներսէս մը, եւ այն Մովսէսին, տաղասաց կը ճանչնայ. այս պատճառով ալ իրեն վերագրած է տաղեր ալ, որոնց հեղինակը ձեռագիրներու մէջ Ներսէս Բաղիշեցի կը ներկայանայ: Այս Բաղիշեցի Ներսէսի մասին, որ Մովսէսի զգացի ալ կը կոչուի, պիտի խօսիմ առանձին գլխով: Վերագոյն գնահատած էի ուրիշ երեք Ներսէսներ ալ, որոնց առաջինը, Մատաղ յորջորջուած, հայրենեօք Մովսէսի համարած էի, ԺԶ. դարու առաջին քառորդին: Ծովական վարդապետի աշխատանքը գնահատելի է մասնաւորապէս այնու, որ նա նկատի առած է Երուսաղէմի Ս. Յակոբեանց Մատենադարանի ձեռագիրները:

Այս տեղ քննութեան պիտի առնեմ Ներսէս Բեղլու Մովսէսը գրուածքները, որքան անոնք ծանօթ են ինձ: Վենետիկի Թ. 171 ձեռագիրը, զոր վերագոյն առիթ ունեցանք քանիցս յիշելու, տակաւին չէ ցուցակագրուած. յիշեալ համարը Մատենադարանին հին կարգին համաձայն է, ուստի պէտք չէ շփոթել Հ. Բ. Մարգարեանի Յուցակին թիւ 171 ձեռագրին հետ:

- 1. Ողբ վասն աման Երուսաղէմի: ի հոլովել ժամանակին
եւ ի մերձեւն աւուրց վերջին,
Յորում սպառաւ փոքր այն բարին,
զոր առաջինքը գործեցին...
- վ. Յարմարողիս բանիս սղբան,
ողորմիս տուք ի լի բերան:
Ներսէս բարունեան,
հաստատողի Լճոյս անապատեան:

Ի կատարածին կայ ծանօթութիւնս.
«Այս ողբոց բանս Երուսաղէմի վաղուց հետէ շինեալ էր. բայց գեղճուկ բառիւ էր. ապա Աստուած լուսաւորէ զՆերսէս վարդապետի ծնողաց հոգին, որ մեր աղաչանացն լսեց եւ նոր շարագրեաց, համեղացոյց գրանս եւ յինքենէ այլ ասաց ի վերայ: Այլ եւ առաջինի կայ Աստուածածնի պատմութիւնս այլ նա արարեր է, յԵրուսաղէմ շինել ստանաւոր: Նաեւ գիտելի է զի ինքն ի Մովսէս է. եւ գնաց յանապատն Տաթևոյ. Գ տարի եկաց եւ եկաւ անտի աստ ի Լճոյս կղզիս՝

հաստատեաց անապատ, որով բազում մարգրիկք Աստուծոյ հաճոյացան նորա պատճառաւ. ի թվ. Ռ-ՉԱ: Փառք Բրիտանոսի Աստուծոյ:

Չեռագիրք՝ էջմիածին, Թ. 2079, թղ. 191ա—194բ (1672): Վենետիկ, Թ. 171. էջ 340 (յամէ 1624):

Առ այս կը գրէ Quadro, էջ 152.

A richiesta de' suoi confratelli una bellissima Elegia sulla presa di Gerusalemme fatta da Saladino nel 1117, la quale riesce assai più bella, e meravigliosa, perché venuta alla luce in una epoca, in cui era totalmente sparito da ben tre secoli il buon gusto non solo di poetare, ma di favellare persino il puro linguaggio letterale. Թարգմանութիւնն է. «Այս շատ գեղեցիկ Ողբը գրած է իր եղբայր-բակիցներու խնդրանքով Երուսաղէմի 1117ին Սալահաղինէն առումին վրայ: Ողբս յօրինուած է շատ սիրուն եւ հիանալի, վասն զի լոյս տեսած է ժամանակ մը, երբ բոլորովին նուազած էր, երեք դարէ ի վեր, գեղեցիկ ճաշակը, ոչ միայն բանաստեղծելու, այլ եւ թոթովելու միջեւ իսկ պարզ գրական լեզուն»:

Ինչպէս վերագոյն տրուած ծանօթագրութիւնը կը հաղորդէր, Տաղիս սկզբնադիրը գրուած էր Երուսաղէմ 1608/9ին, ուսմկորէն բարբառով, եւ հեղինակը յետոյ միայն հետեւելով իր աշակերտաց խնդրուածքին վերածած է զայն գրաբարի, աւելի ճոխացնելով եւ ընդարձակելով: Յանկալի էր վեր հանել սկզբնագիրը, եւ լսել հեղինակին սամկարարբառ հարազատ հնչիւնները:

2. Ներբողեան վիպասանական ի փոխումն Աստուածածնին Կուսին եւ յաղագս Պատկերին սրբոյ, որ բերեալ հանգուցաւ տեսչութեամբ Խոզոյն ի սահմանս Անճեւացեաց, ի տեղին կոչեցեալ Հոզոնց վանք:

Աստուած եւ Տէրն ամենայնի,
Եւ արարիչն արարածի,
Որ էրն եւ է եւ եղիցի,
Եւ յանրաւիցս ոչ պարագրի...
Վերջին ձ. տունն է.
Իսկ դու ծնող Հօր Միածին,
Մեք հրովարտակք գորով նմին.
Դու հարսն ամբիժ Երրորդութեան,
Մեք փողք հնչողք զծնունդ քոյին:

Այս տեղ ընդհատած է Ներսէս Մովսէսի իր Երգը. զոր շարունակած է ապա իր աշակերտը Ստեփաննոս Շատախեցի այսպէս.

Որպէս Տէրն եւս զմահուն իւր փայտ,
Առ յինքենէ աստէն պատանդ...

Վերջին 340—357 տունները կը կապեն. ՍՏԵՓԱՆՈՍ ՄԵՂԱԽՈՐ: Տուն 330.

Երես ի վայր կամ ի յանկման,
Թըւով լցեալ եօթն յօրեւան.
Ըստ այսմ ճառիս որ զըրացան,
Հորով յաւարտ կատարեցան...

Այս ինքն միջեւ հոս գրուեցաւ 350 տուն: Կը յաջորդէ.

Այժմ դարձեալ ընդ նոյն շաղին,
Երգս երգեցից Մօրդ անկին.
Քեզ պատմարանս ըստ այրուրենին,
Ինձ ողբ եւ ճայնըս լալազին:

Աստուած հանուրց գոյականին,
Հայր անրակիզրն եւ անքնին...

Այս յաւերածական մասը կը կապէ Ա.—Գ. ՈՂՈՐՄԵԱՅ: Ընդամէնն Ն, այն է 400 տուն: Կաւարտի.

Ես փանաքի գորով անձին,
Չեմ արժանի այսր մասին.
Թէպէտ անունս բոլոր կոչին,
Պըսակ եւ տեսար Ստեփաննոսին:
Այլ այս թըւիս որ յառաջեալ,
Եւ բան գրան գորով ծնեալ,
Նախ մին հարիւր Ներսէս ոգեալ,
Որ պըւէտ Մովսէս մակ ճայնացեալ:
Յեա այսմ եւ մեր վստահացեալ,
Բան ի բանից գոյ կըցիլցեալ.
Երից հարեւրց մակագրեցեալ,
Համայն չորիւք բովանդակեալ...

Ով հանդիպողք այսմ խունիմաստ սփերի, յիշեօջիք յագօթն ձեր զիս յետինս ի կրօնաւորաց, որ եւ անուանս չեմ արժանի (3 տող զատարիկ). որ յԱստուծոյ նախախնամութիւն: զի Մովսէս Ներսէս վարդապետն ի վերին Տաթևոյ անապատն կացեր էր. Գ. տարի. եկաւ ի վանայ երկիրս ի Լճոյ կղզիս անապատ հաստատեաց ի թվին Ռ-ՉԱ (1622). եւ մեք այլ նորա միարանեալ ընկեցաք աստ: Եւ գայս պատմութիւնս նա ստանաւոր յԵրուսաղէմ շիներ էր ձ տուն, ի սուրբ Աս-

1 Չեռ. մրկեաց:

64—65. Հմմտ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքեր, Ա., 27): Այնպէս կը տեսնուի, որ Ստեփանոս այս տարւոյն քաշուած էր առաջնորդութենէն, աթոռը թողլով Ղուկասին:

Իր առաջնորդութեան տարիներուն Լիմի անապատը ծաղկած է մեծապէս: Արդէն 1628ին երբ առաջնորդութենէն առաւ, միաբանութեան անդամներու թիւը հասած էր 60ի («յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք ստացողի զրոյցս Ստեփանոս վարդապետին, եւ... միաբանիցն որ կան այժմ. Կ. եղբայր միակեցական հաստատ կարգօք ի փառս Աստուծոյ» (Հոռմ, R. B. Casanatense 2053, fol. 406 v): Նոյնը կը կրկնէ Ստեփանոս 1629ին իր արձանագրութեան մէջ:

Որ սպասաւոր եմ յայս մենաստան, Լիմ կոչեցեալ անապատեան, Կ. անձինք ճգնողական, Փառարանողաց Աստուածութեան. Յետ Ներսէսի հօր սրբազան, Որ մեզ յանձնեաց զայս միաբան:

Իսկ Oxford ի թ. 96 հայերէն ձեռագիրը, որ հաւաքածոյ մըն է Դատաստանաբոց, անոնց թիւը 1638ին 70 կը ներկայացնէ (Conybeare, Catalogue, p. 218): 1636ին Աւետարան մը կը գրուի ի Լիմ (եւ մասամբ ի Վան), «ի խնդրոյ սրբաանունդ եւ մաքրամիտ, հեզահօգի, քաջ եւ արի Ստեփանոս վարդապետի եւ միաբանութեանս ամենայնի, որ են յանապատս Լիմ ԲԺ կարգաւորօք եւ Օ միակեցօք ի սէր Քրիստոսի եւ ի յապաշխարութիւն ճգնութեան աշխատեալք, անհանգիստ տքնութեամբ, մշտական առաքինութեամբ» (Լալայեանց, անդ, 889): Իսկ ինքը Ստեփանոս կ'աւելցնէ.

«Արդ անպիտանս եւ ապիկարս ի գործս կրօնաւորութեան, որ զանուն վարդապետի եւ զառաջնորդութեան առեալ՝ վասն հոգեւոր եղբարցս անապատիս եւ ի գործոց ճգնութեան եւ յառաքինութեան վերջացեալ եմ. որ զեղբարցս պէտս հոգոյ եւ մարմնոյ յանձն եմ առեալ եւ լիապէս չեմ կատարեալ, այլ պարտատէր եմ ինձ եւ սոցա: Բայց յայս զՔրիստոս ունիմ, որ ի յեղբարց ազօրից մասն պարգեւէ մեզ. եւ որպէս աստ միաբան՝ յեկեղեցի եւ ի սեղան եւ յայլ ամենայն գործ. նոյնպէս եւ ի դատաստանին՝ ի միմեանց մի անջատեցէ. ամէն»: Միաբաններ-

րու թիւն է 1647ին «Մ. աւելի եւ ոչ-պակաս» (անդ, էջ 64—65):

Առաքել Դաւրիթեցի կը գրէ «աճեցին միաբանք Լիմայ անապատիս, վասն որոյ երեալ ի Լիմայ՝ զնացին ի տեղին, որ անուանի Կտուց... եւ անդ եւս շինեցին անապատ եւ եղբայրանոց» (էջ 254):

Ստեփանոսի օրով կար ի Լիմ փութաջան գրիչ մը Աւետիս, որուն համար կը գրէր Ստեփանոս վարդապետ, թէ «Ձայս սուրբ Աւետարանս յստոյզ յօրինակէ ետու գրել վասն անապատիս հաստատութեան ի Սըսայ յօրինակէն, զոր ընտրեաց սէր Աւետիս ծերն եւ զրեաց Ա իւրն, որ տարան ի Թացու. եւ Ա Նորշինոյ՝ Յոհանէսին¹. եւ մինս այս, ի տկարութեան ժամանակին, որ մինչ ի մեռանելոյ յօրն կու գրէր. զոր Տէր Աստուած ողորմեսցի իւրն ամէն» (Լալայեանց, անդ, 889):

Ստեփանոս Շատախեցի իբրեւ գրական աշխատանք ունի միակ գրութիւն մը, 350 տունէ, ի ննջումն Աստուածածնի, զոր կցած է իր ուսուցչին՝ Ներսէս Մոկացոյ «Աստուած եւ սէր ամենայնի» տաղին, իբրեւ ի լրումն, վասն զի Մոկացին թերակատար թողուցած էր այդ տաղը. տես այս մասին Մոկացոյ նոյն տաղին առթիւ գրածներս: Quadro այս յաւելուածը «անմասն» կը դտնէ այն ոճին, զոր ծաղկեցուցած էր Ներսէս իր տաղին մէջ:

Նորայր Բիւզանդացի իր անտիպ մէկ գրուածքին մէջ կը գրէ թէ Ստեփանոսի այս յաւելուածական մասը ինչ ինչ ձեռագիրներու մէջ վերնագիր կը կրէ «Ստեփանոսի Շատախեցոյ»: Ես չեմ հանդիպած այդպիսի ձեռագրի:

Ի կատարածին կը գետեղեմ արձանագրութիւն մը, զոր Ստեփանոս վարդապետ փորագրել տուած է Խաչքարի մը վրայ ի Լիմ: Արտագրութիւնը կատարած է Ե. Լալայեանց, Ազգագրական Հանդէս, ԻԲ (1912), էջ 92—93:

Առաջին երեսին վրայ:

ԿԱՆԳՆԵՅԻ ԶԵԱԶՍ ԲԱՐԵՆԱՒՍ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ՀՈԳՈՅ ԻՄՈՅ. ԵՍ ՄԵՂԱԻՈՐ ԱՏԵՓԱՆՈՍ ԲԱՆԻ ՍՊԱՍԱՒՈՐ. Ի ԼԻՄԱՅ ԱՆԱՊԱՏՍ ԸՆԴ ԷՈՎԱՆԵԱԻ ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳԱՅ ԶԱԻՐԱՎԱՐԻՆ Ի ԹՎ. ՌԷԸ. ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՅԻՇԵՑԷՔ ԶԻՍ ԵՒ ԶՄԻԱԲԱՆ(Ս) ԱՆԱՊԱՏԻՍ Ի ՔՐԻՍՏՈՍ:

¹ Այս Աւետարանն է թ. 380 ձեռագիրը, 1635ին (Լալայեանց, անդ 885—887):

Երկրորդ երեսի վրայ:

ՈՎ ԲԱՌԱՆԵՇ ԶԷՆ ՅԱՎՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԵԱԼ ԱՐԵԱՄԲ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՅՈՐՈՒՄ ՀԱՆԳՁԻ Ի ՔԵԶ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌ ԵՂԵՐ ՄԵՐ ՓՐԿՈՒԹԵԱՆ Ի ՅԱՆԻՇԻՅՆ ՀԻՆՆ ԱԳԱՄԵԱՆ ՅՈՐԺԱՄ ԾԱԳԻՍ ՓԱՅԼԱՆՄԱՆ ԼՆՈՒՍ ԼՈՒՍՈՎ ԶԵՐԿԻՐ ԼԸՄԱՆ ՓԱՌՕՔ ԿԱՆԳՆԵՍ Ի ԳՈՂԳՈՒՅՆ ԵՐԿՐՊԱԳԻՍ ՅԱԶԳԷ ՄԱՐԳԱՆ ՊԱՅՄԱՌ ԾԱԳԻՍ ԼՈՅՍ ԳՈ ՓԱՅԼՄԱՆ ՅՈԳԻՍ ՄԵՂՕՔ ՄԵՌԵԱԼ ԲՆԱԿԱՆ ԱՏԵՓԱՆՈՍԻ ԹՇՈՒԱՌԱԿԱՆ ՀՈԳՈՎ ԹԱԽԾԵԱԼ ԵՒ ԱՆՊԵՏԱՆ ՈՐ ՍՊԱՍԱՒՈՐ ԵՄ ՅԱՅՍ ՄԵՆԱՍԱՆ ԼԻՄ ԿՈՉԵՑԵԱԼ ԱՆԱՊԱՏԵԱՆ, Կ. ԱՆՁԻՆՔ ԾԳՆՈՂԱԿԱՆ, ՓԱՌԱԲԱՆՈՂԱՅ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ. ՅԵՏ ՆԵՐՍԷՍԻ ՀՕՐ ՍՐԲԱԶԱՆ ՈՐ ՄԵԶ ՅԱՆՁՆԵԱՅ ԶԱՅՍ ՄԻԱԲԱՆ, ԻՆՔՆ ՀԱՆԳԵԱԻ Ի ԳԵՐԵԶՄԱՆ ՄԵԶ ՍՈՒԳ ԵԹՈՂ ԱՆԱՆՅԱԿԱՆ Ի ԹՎԻՆ ՌԷ = ԽԱԳԱՐ ԽՕՐԱՄԱՆԱՄ, Դ ԸՆԴ ՆՄԻՆ ԵՂԵՒ ՎԱԽՃԱՆ ԵՒ ՄԵՔ ՄՆԱՅԱՔ Ի ՏԱՏԱՆՄԱՆ Ի ՆԵՐՀԱԿԱՅՆ ԲՆԱԿԱՆ ԶՈՐ ԵՒ ՀԱՅՑԵՄՔ ԵՐԿՐՊԱԳՈՒՅՔ ԽԱԶԻՍ ՏԵՄԱՆ ԻՐ ՅԱՆԳԻՄԱՆ ՍԻՐՈՎ ԽԵՒԻՐԵԼ ՄԵԶ ԹՈՂՈՒԹԵԱՆ² ՔՐԻՍՏՈՍԷ ՄԻՇՏ ՅԱԻՏԵԱՆ. ԹՎԻՆ ՌԷԸ ԳՐԵՑԱԻ:

Ստեփանոս կանգնած է մահարձան մ'ալ 1647ին, ուր արձանագրած է 1621—1647 տարիներուն, այսինքն Ներսէս Մոկացոյ եւ իր առաջնորդութեան տարիներուն ի Լիմ իր առաջնորդութեան տարիներուն ի վախճանած կրօնաւորներու անունները: Ասոնցմէ առաջին ութը քահանայական դասէ են, իսկ երեսունը եղբայրներ: Յառաջ կը բերեմ առաջին ութի անուններն միայն եւ անուանացանկիս կցուած վերջարանականը:

- ԹՎ. ՌԷ. ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՍՍՅԷՔ. ՆԵՐՍԷՍ ՎԱՐԳԱՊԵՏԻՆ.³ ՏԵՐ ԱՒԵՏԻՍԻՆ⁴. ՏԵՐ ՊԵՏՐՈՍԻՆ⁴. ՏԵՐ ՍԱՐԳԻՍ⁵. ՏԵՐ ՅՈՎԱՆԷՍ. ՏԵՐ ՄԵԼԻՔԻՍԵՐ.

² Տպ. Թոգոթիւն: ³ Ծերունի գրիչ. † 1635. Հմմտ. վերը: ⁴ Կը յիշուի 1635ին Աւետիս երէցի կողմէ «առաջնորդի սուրբ ուխտի» (Լիմայ) Ստեփանոս վարդապետի, վերակացութեան (տպ. վերակացութեամբ) հաւրեղբարցս եւ Պետրոս արհիպիսկոպոսին». Լալայեանց, Յուլիան, էջ 886: ⁵ Հմմտ. անդ, էջ 888:

ՏԵՐ ԳԱԻԹ.
ՏԵՐ ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱԿԱՆՑ.
.....
.....

ԱՅՍ ԵՆ ԱՌԱՋՆՈՐԳԻՆ ԹԻՇԵՅԷՔ ԱՆԱՊԱՏԻՍ ԱՄԵՆԱՅՆ. ՌԷ ԹՎԷՆ ՄԻՆՁԵՒ ՌՂԵ ԹՎԻՆ. Դ ԱՄ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԳԱՊԵՏՆ ԿԵՑԱԻ, ՎԱԽՃԱՆԵՑԱԻ. ԵՒ ԱՆՏԻ ՄԻՆՁԵՒ ՅԱՅՄԻՇ ԵՍ ԱՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԳԱՊԵՏ ՍՊԱՍԱՒՈՐԵՄ ԱՆԱՊԱՏԻՍ. ԵՒ Թ. ԱԹՈՒԼ (՞) ՎԵՍՊԱՍԱՒՈՐԵՄ ԱՆԱՊԱՏԻՍ. ԵՒ ԱՅՅԻՄ ԿԱՄՔ Հ. ԵՂԲԱՅՐ ՀԱՍՐԱԿԱՅՈՒԹԵԱՆ. ԵՒ ԱՅՅԻՄ ԿԱՄՔ Հ. ԵՂԲԱՅՐ ՀԱՍՐԱՏԱՏ. ՈՎ ՈՐ ՎԱԽՃԱՆԻ ԳԱՅՑԷՔ ՈՂՈՐՄԻ ՏԱՅՑԷՔ:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԸԶԱՐԵԱՆ ՏՈՂՄԻ

(ԿԵՆՍՏԱՆԻ ՈՒՐՈՒԱԳՇԵՐ)

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

Աշխատարկեց՝ ՅՈՎԱՆ ՔԱՐԵՆԵԱՆ

ԳՂՈՒՆ Ե.

(Շարունակութիւն):

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ (1791—1813)

Յարութիւն Լազարեանը աղայ Յովակիմի երրորդ որդին էր. ծնուել է 1791 թ. փետրուար 15ին:

Մ. Ստեփանը այսպէս է բնութագրում. «Մնա՛ զարգացաւ եւ հրահանգեցաւ ընդ ձեռամբ բարեկիրթ դաստիարակաց:

Առողջ էր նա անձամբն, հասակագեղ, զուարթ, հեղ բարիւք, եւ դիմօք պայծառ»: Պատանեկական հասակում Յարութիւնը մտնում է զինուորական ծառայութեան մէջ, ուր նա ցուցադրում է արտակարգ ուղիղ կան ընդունակութիւններ: Այնուհետեւ մասնակցել է 42 կռիւների, մեծ քաջազործութիւններ արել եւ իր զինուորական մեծ տաղանդը ի յայտ բերել: Անշուշտ, նա կ'ունենար շատ փայլուն ապագայ, կը հասնէր մեծամեծ աստիճանների ու փառքի, եթէ անողորմ ճակատագիրը այնքա՛ն վաղ չկտրէր նրա երիտասարդական ծաղիկ կեանքի թելը՝ 22 տարեկան հասակում...:

⁶ Տպ. առջինը: ⁷ Տպ. ցայժմ: